**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՈՍՔ**
**SPECIAL TOPIC: HUMAN SPEECH**

I. ԲԱՑՄԱՆ ՄՏՔԵՐ ԱՌԱԿԱՑԻՑ
   Ա. Լեզուն՝ խոսքը, Աստծո պատկերի մի մասն է մարդկանց մեջ (այսինքն՝ խոսվեց և արարվեց ամեն ինչ և Աստված խոսում է Իր մարդկային ստեղծագործության հետ): Դա մեր էության ամենակենսական մասն է կազմում:
   Բ. Մարդկային խոսքը հնարավորություն է տալիս մեզ ուրիշների հետ հաղորդակցվելու այն մասին, թե ինչ ենք կյանքում զգում, վերապրում: Հետևաբար հայտնում է, թե ով ենք մենք իրականում (Առակ. 18:2, 4:23, 20-27): Խոսքը մարդու էության թթվային ստուգարքը՝ թեսթն է (Առակ. 23:7):
   Գ. Մենք սոցիալական էակներ ենք: Մեզ անհանգստացնում է, թե ընդունված և արդարացված ենք արդյո՞ք: Մեզ դա անհրաժեշտ է թե՛ Աստծուց և թե՛ մեր ընկերներից, բարեկամներից: Խոսքերն ունեն զորություն լուծելու այս կարիքները թե՛ դրական (Առակ. 17:10) և թե՛ բացասական (Առակ. 12:18) կերպով:
   Դ. Հսկայական զորություն կա մարդու խոսքի մեջ (Առակ. 18:20-21)՝ զորություն օրհնելու և բժշկելու (Առակ. 10:11,21) և զորություն անիծելու և կործանելու (Առակ. 11:9):
   Ե. Մենք հնձում ենք այն, ինչ ցանում ենք այս բնագավառում (Առակ. 12:14):

II. ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԱՌԱԿԱՑԻՑ
   Ա. Մարդկային խոսքի բացասական և կործանարար ներուժը
      1. չար մարդկանց խոսքերը (1:11-19, 10:6, 11:9,11, 12:2-6)
      2. շնացող կնոջ խոսքերը (5:2-5, 6:24-35, 7:5բ, 9:13-18, 22:14)
      3. ստախոսի խոսքերը (6:12-15,19, 10:18, 12:17-19,22, 14:5,25, 17:4, 19:5,9,28, 21:28, 24:28, 25:18, 26:23-28)
      4. հիմարի խոսքերը (10:10,14, 14:3, 15:14, 18:6-8)
      5. սուտ վկաների խոսքերը (6:19, 12:17, 19:5,9,28, 21:28, 24:28, 25:18)
      6. բամբասկոտի խոսքերը (6:14,19, 11:13, 16:27-28, 20:19, 25:23, 26:20)
      7. շուտափույթ ասված խոսքերը (6:1-5, 12:18, 20:25, 29:20)
      8. շողոքորթի խոսքերը (29:5)
      9. չափից շատ խոսքերը (10:14,19,23, 11:13, 13:3,16, 14:23, 15:2, 17:27-28, 18:2, 21:23, 29:20)
      10. ծռված խոսքերը (17:20, 19:1):
   Բ. Մարդկային խոսքի դրական, բժշկարար և շինող ներուժը
      1. արդարի խոսքերը (10:11, 20-21, 31-32, 12:14, 13:2, 15:23, 16:13, 18:20)
      2. խոհեմ մարդու խոսքերը (10:13, 11:12)
      3. գիտության խոսքերը (15:1,4,7,8, 20:15)
      4. բժշկության խոսքերը (15:4)
      5. մեղմ պատասխան տալու խոսքերը (15:1,4,18,23, 16:1, 25:15)
      6. հաճելի պատասխանի խոսքերը (12:25, 15:26,30, 16:24)
      7. օրենքի խոսքերը (22:17-21)

III. ՀԿ-Ի ՁԵՎԱՉԱՓԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՆԿ-ՈՒՄ
   Ա. Մարդկային խոսքը հնարավորություն է տալիս հաղորդակցվելու ուրիշների հետ, թե ինչ ենք զգում կյանքի վերաբերյալ, հետևաբար հայտնում է մեր իրական էությունը՝ անձը (Մատթ. 12:33-37, 15:1-20, Մարկ. 7:2-23):
   Բ. Մենք սոցիալական էակներ ենք: Մենք անհանգստացնում է այն, թե ընդունված և արդարացված ենք արդյո՞ք: Մեզ դա անհրաժեշտ է թե՛ Աստծուց, և թե՛ մեր ընկերներից, բարեկամներից: Խոսքերն ունեն զորություն լուծելու այս խնդիրները թե՛ դրական (2 Տիմ. 3:15-17) և թե՛ բացասական (Հակ. 3:2-12) կերպով:

Գ․ Հսկայական զորություն կա մարդու խոսքի մեջ․ զորություն օրհնելու և բժշկելու (Եփես․ 4:29) և զորություն անիծելու (Հակ․ 3:9): Մենք պատասխանատու ենք այն բաների համար, ինչ ասում ենք (Մատթ․ 12:36-37, Հակ․ 3:2-12):

Ե․ Մենք դատվելու ենք մեր խոսքերով (Մատթ․ 12:33-37, Ղուկ․ 6:39-45) ինչպես նաև մեր գործերով (Մատթ․ 25:31-46): Մենք հնձում ենք այն, ինչ ցանում ենք (Գաղ․ 6:7):